

րեւ զարհամարհողս⁸⁵ պատուիրանացն Աստուծոյ, եւ ձեռնադրութիւն անվաւեր եւ ընդ ունայն եւ սուտ եւ ի դատապարտութիւն եղիցի»:

Արդ, որք վասն երկիրդին Աստուծոյ միաբանեսցին սահմանադրութեանս մերոյ կանոնիս՝ արհնեալ եղիցի՝ նա ի Տեառնէ եւ յամենայն ուղղափառ ծառայից Աստուծոյ եւ դասակից եղիցի սրբոց հարցն եւ ճշմարիտ հովուացն յարքայութեան երկնից: Իսկ որ դիմադարձ լիցի եւ արհամարհեսցէ եւ առ ոտն հարցի զհրամանս մեծի ժողովոյս, որ կանոնեալ սահմանեցաւ՝ ի մերմէ միաբանութենէս որոշեսցի եւ յամենասուրբ Հոգւոյն նզովեսցի եւ մասն եւ բաժին ընդ անհաւատան լիցի եւ խոստացեալ արքայութեան Քրիստոսի մի՛ հասցէ⁸⁶:

[Եւ ետու զայս անհողութիւն⁸⁷ ձեզ սրբասիրաց, Քշիկայ՝ ներսմիրհայ⁸⁸ վանից տանուտեառն եւ Գրիգորայ՝ Յովսիփայ վանից տանուտեառն⁸⁹: Եւ եղիայ՝ Հայոց կաթողիկոս, հանդերձ իմովք⁹⁰ եպիսկոպոսաւքս առի զմիաւորութեան գիրդ ի ժողովոյդ Աղուանից եւ ետու զայս պայմանի գիր ձեզ, զի մի՛ ոք յանդգնեսցի թիրեղ ինչ զեզեալ ուխտադրութիւնդ: Եւ զերկոսեան նամակսդ կնքեալ իմով մատանեալ՝ ետու ի պահեստի ներսմիրհական⁹¹ ուխտի⁹², ի ձեռն սրբասիրի Քշիկայ⁹³ հար՝ պայման անհողութեան⁹⁴:]

Եւ⁹⁵ զրեցաւ գիրս այս վկայութեամբ երկոցունց կողմանց⁹⁶ ի ՃՄԲ թուականութեան Հայոց եւ Ձե թուականութեան Տաճկաց⁹⁷:

87 *bclrv* անհողութիւն զայս *փյս* զայս անհողութիւն (*a*)
88 *a* Քշկա Ներսմերհի *փյս* Քշիկայ Ներսմիրհայ (*bclrv*)
89 *bclrv* Յուսիփայ [*bcrv* Յուսիփայ] վանի տանուտեառն Գրիգորայ [*l* Գրիգորի] *փյս* Գրիգորայ ... տանուտեառն (*a*) (1 տող)
90 *a* իմ *փյս* իմովք (*bclrv*)
91 *a* Ներսմերհի *փյս* Ներսմիրհական (*bclrv*)
92 *bcl* ուխտ *փյս* ուխտի (*arv*)
93 *a* Քշկա, *bcr* Քշիկա *փյս* Քշիկայ (*lv*)
94 *AB* չիք եւ ետու զայս ... անհողութեան (վերականգնում ըստ *abclrv*) (13 տող)
95 *a*_բ*b*_բ*c*_բ*լ*_բ*բ*_բ*բ*_բ չիք եւ (*lv*)
96 *a*_բ*b*_բ*c*_բ*լ*_բ*բ*_բ*բ*_բ միաբանութեամբ եւ Աստուծոյ միջնորդութեամբ վասն հաստատութեան հաւատոյ անշարժ լինելոյ ի մէջ երկոցունց *փյս* վկայութեամբ ... կողմանց (*AB*) (1 տող)
97 *abclrv* չիք եւ գրեցաւ ... Տաճկաց (3 տող) | *a*_բ*b*_բ*c*_բ*լ*_բ*բ*_բ*բ*_բ Ութսունհինգերորդի [*a*_բ Ձե-երորդ, *b*_բ*լ*_բ Ձե-երորդի] ամին [*a*_բ ամի] Տաճկաց եւ [*a*_բ չիք եւ] ի հայ թուականիս ՄԽԼ-ին [*a*_բ ՄԽԼ, *b*_բ*լ*_բ ՄԽԼ-ի], յամենան [*a*_բ յամենան] Հրոտից, եւ կնքեցաւ կամաւք մերովք եւ մատանեալք [*b*_բ*c*_բ*լ*_բ*բ*_բ*բ*_բ մատանովք], որոց անուանք ի վերոյ [*b*_բ*լ*_բ անուանքն վերայ, *crv* անուանք վերայ] վերագրեալ են *փյս* ի ՄԽԲ թուականութեան ... Տաճկաց (2 տող)

85 *B* զարհամարհողս
86 *abclrv* եւ ցուցին ինձ զայն գիր, որ յառաջ նզովեալ եւ ի բաց ընկեցեալ էր զՆերսէս ի [*a* ի Հայոց] կաթողիկոսութեանէն [*bclrv* կաթողիկոսութեանէն]: Թէպէտ եւ նա [*bclrv* նա թէպէտ եւ] բռնակալութեամբ կացեալ էր յաթոռն, սակայն նոյն եպիսկոպոսունքն եւ բովանդակ [*a* բաւանդակ] ուխտ եկեղեցւոյ վերստին նզովեցին գրով եւ կնքով, Աստուծոյ միջնորդութեամբ եւ մեաւք հանդերձ եւ պայմանեցին, եթէ՛ կամք ի նոյն հաստատութեանս եւ ոչ խառնիմք ի [*bclrv* խառնակիմք ընդ] պիղծ աղանդն [*bclrv* աղանդոյն] Քաղկեդոնի եւ ընդ չար վարդապետութիւնն Բակուրայ [*bclrv* Բակուրի]: Արդ՝ եթէ կան ի նոյն պայմանի եւ յաւանդութեան սուրբ հարցն, ընկալարո՛ք զողոսա եւ սիրեցէք որպէս զհոգեւոր տեսուչս ձեր. ապա եթէ թիրեացի ոք յայս պայմանէս [*bclrv* ի պայմանէս յայսմանէ], կաթողիկոս կամ եպիսկոպոս, չունի իշխանութիւն ի ձեր վերայ [*bclrv* վերայ ձեր], այլ կալ ձեզ յեկեղեցիս ձեր եւ հանապազ անդադար աղաւթս մատուցանել առ Աստուծ. ի ձեր վերայ իշխան Աստուած լիցի եւ ուղղափառ վարդապետք *փյս* «Այսար արհնեցաք ... մի՛ հասցէ» (72 տող)

ՅՈՎԱԿԻՓ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՂԲԱՏԵՑՈՒ ԱՂՕԹՔԸ (ԺԲ. ԴԱՐ)

Գայիաւե Թերզեան

Յովսէփ Հաղբատեցի վարդապետի անուամբ մեզ է հասել մի աղօթք՝ գրուած Հառիճի վանահայր Գրիգորի պատուէրով¹: Աղօթքի գրչուժեան ժամանակը կարելի է համարել Գրիգոր Հառիճեցու ապրած ժամանակաշրջանը, այն է՝ ԺԲ. դ. երկրորդ կէսը: 1173 թ. Հաղբատի մի ձեռագրում Յովսէփ վարդապետը յիշատակում է որպէս կազմող. «Կազմեցաւ ձեռամբ Յովսէփայ վարդապետի եւ եղաւ յարկեղ Սրբոյ Նշանիս»²: ԺԴ. դարի մի գրիչ յիշատակաւորում գրում է, որ ձեռագիրն ընդօրինակել է Բագնայրեցու ստոյգ եւ ընտիր օրինակից, «զոր սուրբ վարդապետին Յովսէփայ գտեալ թարգմանչացն գրաց ի մայրաքաղաքն Հաղբատ»³: Կ. Մաթեւոսեանը կարծում է, որ այս երկու ձեռագրերում յիշատակուած անձինք նոյնն են, եւ Յովսէփ վարդապետը ոչ միայն եղել է կազմող, այլեւ եկեղեցու «ձեռագրական պահոցով զբաղուող մարդ»⁴: Ցաւօք, Յովսէփ վարդապետի մասին այլ տեղեկութիւններ առայժմ չունենք:

Այս աղօթքի՝ Հաղբատում գրուած լինելու օգտին են խօսում նաեւ Գրիգոր Հառիճեցու նամակում տեղ գտած՝ Յովհաննէս Սարկաւազի մասին հետեւեալ տողերը. «Ցանկայի զայս լինէր ի մերմէ Սարկաւազէ, այլ Հոգին քեզ պատշաճեալ պա-

հեաց... Հաւատա ինձ, որդեակ իմ, զի թէ զիմն ծեր զվերասացեալն իմաստուն՝ լքի ի մանկութենէ իմում, զմանուկ եւ զիմաստուն երկրորդ գտի ի ծերութեան իմում, առաւել բերկրութիւն սրտիս»⁵: Փաստօրէն՝ Գրիգոր Հառիճեցին եղել է Յովհաննէս Սարկաւազի աշակերտը, որին վաղ տարիքում կորցրել է⁶, եւ քանի որ ցանկանում էր, որ աղօթքը Սարկաւազը գրէր, բայց չստացուեց, թերեւս նրա մահուան պատճառով, ապա նա այդ գործը յանձնարարում է Հաղբատավանքի մէկ այլ վարդապետի՝ Յովսէփին, որին «Հոգին... պատշաճեալ պահեաց»⁷, եւ որը, անշուշտ, Սարկաւազի պէս իմաստուն եւ աստուածային շնորհներով վարդարուած վարդապետ պէտք է եղած լինէր:

Գրիգոր Հառիճեցու նամակի բնագիրը եւ աշխարհաբար թարգմանութիւնը հրատարակել է Կ. Մաթեւոսեանը⁸. այստեղ մենք հրատարակում ենք միայն Յովսէփ վարդապետի աղօթքը:

Աղօթքը նախատեսուած է այն քահանաների համար, ովքեր, պատարագին ներկայ գտնուելով, չեն մասնակցում ծէսին եւ պատրաստուում են Հաղորդութիւն ստանալ պատարագիչ քահանայից: Այն բաղկացած է երկու մասից՝ բուն աղօթքից, որը սկզբում մի փոքր դաւանաբանական ներածութիւն ունի, ապա յաջորդում է ապաշխարութեան աղօթքը, եւ «Յետ ճակամանն»՝ ասում է Հաղորդութիւն ստա-

1 Գրիգոր Հառիճեցին եղել է նաեւ Մխիթար Անցու պատմութեան պատուիրատուն:
2 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վեճետիկ, ցուցակ Բ, թիւ 314, էջ 1268:
3 ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկեանը, Երեւան, 1950, էջ 34:
4 Կ. Մաթեւոսեան, Սամուէլ Անցու ժամանակագրութեան ձեռագրերը եւ նորայայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 189-190:

5 ՄՄ ձեռ. թիւ 2680, 513աբ:
6 Յովհաննէս Սարկաւազը մահացել է 1129 թ. եւ թաղուած է Հաղբատավանքում:
7 ՄՄ ձեռ. 2680, 513ա:
8 Տե՛ս Կ. Մաթեւոսեան, Աշխ., էջ 187-188:

նալուց յետոյ, որն էլ իր հերթին բաժան-
ւում է գոհութեան երեք հատուածներին՝ «ի
Հայր», «յՈրդի» եւ «ի Հոգի»: Մեր փնտր-
տութեանը՝ նմանաբնոյթ այլ աղօթք գտնե-
լու, յաջողութիւն չունեցան: Ուստի կար-
ծում ենք, որ ԺԲ. դարի այս աղօթքն իր
բնոյթով առայժմ եզակի է:

Յովսէփ վարդապետի աղօթքը պա-
րունակող միակ ձեռագիրը ՄՄ ձեռ. 2680
Ժողովածոն է, գրուել է Անգեղակոթում՝
1378 թ. Մատթէոս երէցի կողմից⁹ (աղօթքի
այլ ընդօրինակութիւն չգտանք):

Կատարուած է մասնակի միջամտու-
թիւն, բնագրում առկայ ակնյայտ վրի-
պումներն ուղղուել են, «եւ»-երը՝ դար-
ձուել երկնիչ, թերի բառերը լրացուել են
անկիւնաւոր փակագծերով, համառօտա-
գրութիւնները՝ բացուել:

**Յովսէփա[յ] վարդապետի աղաթք
քահանայից հանդերձելոց միջնորդա
մերձեցալ ի սուրբ գոհութիւնս ի խնորոյ
հար Գրիգորոյ Հատիճայի**

Պատկեր աներեւութի եւ անճառելոյ, էու-
թեանն Հար միայնոյ անբանակի եւ անտեսի
բնութեամբ, բոլորապէս քանակ եւ տեսութիւն ի
նոյնութեան բաժանեալ եւ յորոշման միացեալ:
Առանց կարծեաց արտատրաց, ծնունդ անսկզ-
բանն Հար, Բան Աստուծոյ: Զարութիւնն եւ ճա-
ռագայթ էութեան նորա Յիսուս Քրիստոս: Կնիք
անփոփոխ պատճառին եւ գերազանցին քան
զսահման, սահման եւ բովանդակիչ: Մշտնջենա-
ւորին Հար անընդմիջելի մշտնջենաւորակից,
ժամանակաց եւ յաւիտեանց եւ որոց ի նոսա
Արարիչ ընդ Հար եւ Հոգւոյ Սրբոյ: Էութիւն
ամենաբաւ անբովանդակելի էացելոց: Երկնայ-
նոց անասելի եւ երկրայնոց անթարգմանելի:

⁹ Ձեռագիրը բաղկացած է 568 թերթից, արժէքաւոր
ժողովածոյ է, բովանդակում է Հարանց վարքեր,
իմչպէս գրիչն է ասում. «Հաւաքելով ի համարեմ
աշխարհաց, ի բազում սուրբ գրոց» (369ա): Վերո-
նշեալ աղօթքը գտնուում է 514ա-516բ թերթերում:

Սրովրէական աստուածաբանութեանցն նոյնու-
թեամբ դաւանեալ աստուածավայելուչ դաւանու-
թեամբ: Մի գոյութեամբ եւ իսկութեամբ ընդ որս
տեսանիս դասեալ երեւելեաց եւ աներեւութից
խոստովանեալ Արարիչ աներեւութից յառաջ քան
զյաւիտեանս սկզբնաւորիչ եւ յետ յաւիտենի,
որոց ի նմա տեսանի եւ երեւելեաց ցուցելոց եւ
չափելոց, արեգական սպասաւորութեամբ եւ տե-
սանող աչաց, որք ի ցոյց ամենաբարի կամաց քոց
արարան ի քէն ամենեքեան ի բարւոյ բարի
վկայեալ եւ տեսեալ:

Յորոյ ձեռաց արարաւ նախաստեղծն Ադամ
վայելօղ ամենայնի յաննախանձ բարերարութենէ
քումմէ, տուեալ նմա զորս ի վերա երկրի ընդ քո
թագաւորութեամբ նախախնամականի ի թագա-
ւորութիւն նմա հնազանդութեամբ, զի ցուցցի ի
կերպարանի քում եղեալն, ոչ միայն անձամբ ըստ
քեզ պատկերեալ, այլեւ իշխանութեամբ թագաւո-
րականաւ, յորմէ վրիպեալ սուսերարդ եւ մահա-
պարգեւ խրատու սպանողին մերոյ մահու վիճա-
կեցոյց զինքն: Եւ զամենեսեան, որք որդիք նորա
հանդերձեալ էին լինել բնութեամբ եւ զործովք,
որում ամենեքեան հաւասարեցան ծնեալք ի նմա-
նէ: Ապականեալ իւրաքանչիւր զճանապարհս, իւր
եւ ոչ ոք մնաց, որ ոչ խոնարհեցոյց զզուխս ի կո-
խումն ապականութեան եւ պղծութեան բաց ի
քէն միայնոյ, որ եղեր Որդի նորա՝ ամենայնի
նմանելով նմա՝ արտաքոյ նորին ապականութեան
եւ մեղաց, զի տացեա նմա զքո սեփականան ան-
նախանձ պարգեւսիրութեամբ: Անպարտդ նո-
րայոցն եղեր ինքնակամ ազատութեամբ պար-
տաւոր: Առանց հարկի ծնար ի նմանէ, զի ծնաւոյն
ծնիցելոյ՞ փառաց հաղորդեցցի: Նոր եւ չքնաղ
հրաշից զոլով արարիչ որպէս ամենակարող, զի
Որդւոյ զՀայր փրկել յետ բազում ժամանակաց
միջնորդութեան, ճշմարտապէս անդր եւ ի վեր
քան զբանէ: Ի կատարածի ժամանակի եղելոյ,
նախ զոյացելոց եւ հանդերձելոց գոյանալ, տալ
պարզ[եւ]ս փրկութեան, զերազանց քան զմիտս
արդարեւ է: Եւ միով մահուամբ զամենեսին կե-
նադործել անճառելի ստուգապէս իմանի ի միում
ամենայնի եւ յամենայնի մի: Բարձրագոյն քան
զխորհուրդս անցանէ:

Վարդապետեցեր, գթած, որոյ կարաւոն
էաք եւ բժշկեցեր զբեկումն խորտակման սրտի եւ
մարմնոյ: Ուսուցեր զփրկականսն եւ ծանուցեր
զանձանաւթսն մեզ, յայտնեցեր զանուն Հար քո,
որ յայտնեաց զանուն քո եւ քեւ ընծայեցեր զմեզ
նմա: Ետուր զՀոգիւն Սուրբ եւ խոստացար տալ
զտուեալն: Գրեցեր որդիս զժառայսս եւ արարեր
ազատս զգերեալսս: Խառնեցեր զանխառնելիսն,
զի զանխառնութեանն պատճառս սպանցես յան-
ձին քում: Հաշտեցար ընդ ատելիսս եւ հնազան-
դութեամբ քո Հար հաշտեցուցեր զմեզ: Շինեցեր
զմեզ ի քեզ, զի քակտեսցես զմիջնորմն: Եղեր
զլուխ մեր, զի անդամքս առցեն զաճումն Աստու-
ծոյ: Լինելով քո ի մեզ. միացուցեր զմեզ ընդ
Հար քում եւ արարեր կատարեալս ի մի: Անբա-
ժանելիք ի Հարէ եւ ի Հոգւոյ անբաժ[ան] միու-
թեամբ միացուցեր զմերն, զի միացուցես ի
մարմնի քում զամենայն: Փայտիւ մահու դատա-
պարտեցար, զի զկենացն փայտ մերձենալ ի մեզ
արասցես, յորում կեանքդ ճշմարիտ եղեր պար-
գեւեալ մեզ: Պսակեցար փշովք, զի հաճութեան
քո զինու պսակեսցես զմեզ: Արբեր զդառնութիւն,
զի արբուցես զբաղցրութիւն: Ընկալար թուր, զի
տացես համարձակութիւն: Բանիւ սրբելոցն ի քէն
հաւատացելոց Բանդ եղէր բարեխաւս: Ընդ որս
բանիւ էին մաքրեալք արեամբ նորոյ ուխտիդ կն-
քեցեր, զոր ետուր ի Հարէ: Ծաշակեցեր զմահ, զի
զմահու հաղորդեալս հաղորդեսցես կենաց: Զն-
շանակ ճշմարիտ մահու եւ ստուգապէս կենդա-
նութեան, հեղէր յօժարութեամբ որպէս փրկիչ, զի
զկեանս արբուցես խոստովանողաց զքեզ: Իչեր
ի դժոխս ինքնիշխան զարութեամբ, զի զբռնու-
թեամբ կապեալս արձակեսցես տիրապէս քաջու-
թեամբ: Ելեր հզօրապէս յապականութենէ մարմ-
նոյ՝ անապական: Յարեար ի մահուանէ որպէս
զԱստուած եւ յարուցէր զմահացեալս որպէս փր-
կիչ: Խափանեցեր զպտուղ մեղացն եւ ցուցեր զպ-
տուղ յարութեանն: Յաղթեցեր աշխարհի իբրեւ
հզօր եւ ուսուցեր յաղթել որպէս բարեսէր: Եւ նո-
վիմբ յաղթող մարմնով համբարձար առ Հայր,
որմէ ծոցոյ ոչ մեկնեցար: Մխիթարիչդ յղեաց
առաքեցեր զմխիթարիչ Ոգիդ քո, զի մի ոք մխի-
թարիչ ի մէնչ ոչ պակասեսցի: Բնակել յաւիտեան
խոստացար ընդ մեզ նմա եւ ընդ քեզ եւ զՀայր

եւս մուծէր յորս սիրեցեր, զի սէրն, զոր սիրեաց
Հայր ի նոսա զոլով ի միում փրկագործութեան
երեւեսցի միակամութիւն Երրորդութեանդ Սրբոյ:
Այսմ անշուշտ դաւանութեան հաղորդեալ իմ
շնարհաւք զթութեան քո, գոհութիւն, արհնու-
թիւն եւ երկրպագութիւն մատուցանեմ առաջի
աթոռոյ շնորհաց քոց, բայց ոչ որպէս վայելէրն
հատուցի այսպիսի պարգեւաց: Զի թէպէտ եւ
հնութիւնն իմ խաշակից եղեւ քեզ եւ մկրտեցայ ի
մահ քո, զի նորոգման յարութեանն հասանելով՝
խափանեսցի մարմին մեղացն, ոչ զնորոգ պատ-
մուճանն պահեսցի անաղտ, զոր մաքրութեամբ
ջրոյն ի կողէ քումմէ բղխեցելոյ զգեցուցեր ինձ,
զոր պարտ էի պահել ըստ քեզ տնկակից եղելոյ՝
որպէս վայել է: Զի քեզ ոչ է տիրել կարողութեան
մահու նաեւ ոչ ինձ, եթէ էի կամեցեալ: Բայց արդ՝
իմով կամօք եղէ ծառայ մեղաց: Վաճառեցայ
զարձեալ այնմ, յորմէ գնեցեր: Ոչ ածի զմտաւ
զփրկանսն եւ ոչ զփրկողդ: Զյիշեցի զփրկութիւնն
եւ անտես եղէ ի փրկութենէն: Զնջեցաւ նշանակն
ազատութեան, զոր եղեր ի վերա երեսաց իմոց:
Կողոպտեցաւ զարդն փառաց հարսնական պատ-
մուճանն, որ ի քէն եւ ի Հոգւոյ քումմէ անկաւ: Եւ
փեսավայել պսակն ի թմրութենէ մտաց զողա-
ցեալ յինէն եղեւ: Համարձակութիւնն, զոր շնոր-
հեցեր ինձ, մերժեցաւ յինէն եւ ոչ վստահութիւնն
իմ հայի յիս: Վասնորոյ լի եղէ նախատանօք եւ
այսպն կատականաց, զի ի նոյն դարձայ զլորեցայ
խորխորատ, յորմէ բարձրացայ շարշարանաւք քո
եւ մահուամբ: Բայց հաւատամ, թէ յաղագս այնր
ետուր զմարմին քո եւ զարիւն յիշատակաւ մահու
քո եկեղեցւոյ քում զիտելով որպէս Աստուած
զկորստասէր արտոժակա մեր, զի միշտ բաշխմամբ
զենմանս այսմիկ մշտնջենաւորեսցի խորհուրդ
փրկութեանս եւ զործով ի հաւատացեալս քո:

Արդ՝ անկանիմ առաջի քո բարերար, կոր-
ծանեալս ի հաստատութեան յուսոյ եւ զսէր քո
աստուածային ունիմ բարեխօս հաշտութեան
իմոյ: Մի՛ ըստ որում վայել է ինձ ըստ իմում ընտ-
րութեանն մերժեսցես զիս ի կենաց քոց: Փոխա-
րէն սիրոյ քո ոչ ունիմ Փրկիչ իմ Յիսուս, զի տաց
քեզ ընդ ամենայնի, զոր ետուր ինձ: Ոչ ընկալա
զփրկական բաժակ, զի հաւասարեցայց շարշարա-
նաւք շարշարանաց քոց, զի գոնեա սակաւ մի

